## 21. ԿԱԽԱՐԴ ԴԱՎՐԵՇ

Ժամանակին թագավոր մը կէղնի։ Էգ թագավորին էրեխա չէղնի։ Թագավոր շատ հարուստ կէղնի։ Օր մը կէրթա ուր բախչեն օլորտելու, կտեսնա օր ճնճղներ էրամ-էրամ կիգան կէրթան, ուրանց ձգեր ուրանց հետ։ Կասա. «Ո՞վ, տեր աստված, ճնճղներուն ձագ տվեցիր, էրեխեմ լէ ընձի տեր, ի՞նչ կէղներ։ Ես լէ ուրախնենք, իմ մալ ուրիշներուն չէղներ»։

Դավրեշ մը էնգից կիգա, կասա.—Թագավո՛ր ապրած, հ՚որի՞ն իս զքու նիաթ կախի։

Թագավոր կասա.—Իմ նիաթ չկախիմ, ի՞նչ էնիմ։ Ճնճղներուն լէ ձագ կա ուրախնան, խնդանան, ընձի ճիժ մը չկա, խնդանամ վրեն։

Դավրեշ կասա.—Ես քզի էրկու խնձոր կիտամ, մեկ գու ուտիս, մեկ՝ քու կնիկ, քզիկ էրկու տղա կէղնի, քու տղեկներու անուններ չգրիս չուրի ես գամ։ Ես օր էկա՝ ուրանց անուններ կգրիմ, մեկ՝ ընձի, մեկ՝ քզիկ։

Թագավոր ու դավրեշ թուղթ կիտան իրարու։ Դավրեշ կէրթա։ Թագավոր զխնձորներ կտանի, մեկ՝ ինք կուտա, մեկ՝ ուր կնիկ։ Ինն ամիս օր կթըմի, կնկան կէղնի էրկու տղա։ Տղեկներ կմեծնան,

կդրին վարժատուն, աստծու հրամանքով թագավոր տղե մա կսի-
րա, կնիկ լա՝ տղե մա։

Տղեկներ կմեծնան, կէղնին տաս-տրսվերկու տարեկան։ Օր
մը կնիկ կասա թագավորին.—Թագավո՛ր, արի մեր տղեկներու
անուններ դրինք։ Դավրեշ օր էկավ, կիտանք ուրին փարա, թ'էրթա,
մեր տղեկներ չի տանք։

Թագավոր կքոմա մարդիկ, կբերա օր տղեկներու անուններ
դրա։ Մարդիկ կքոմին կիգան թագավորի քով, օր անուններ դրին։
Միամիտ դավրեշ կիգա։

Դավրեշ կասա.—Թագավո՛ր, չէղնի՞ տղեկներու անուններ
կդնես։ Չէ՞ մենք թուղթ տվինք իրարու, օր տղե մը՝ ընձիկ, մեկ՝
քղիկ։ Չէղնի՞ փոշմներ իս քու խոսքեն։

Թագավոր կասա.—Դավրեշ շան, ես տղից մը հազ կէնիմ, իմ
կնիկ լա՝ աղից մը։ Մըր տղեկներ մը տանի։ Օսկի, արծաթ ինչ
խաղար կուզիս, կիտամ քղիկ։

Դավրեշ կըսա.—Չէ՛, անկարելի ա, ես տղե մը կտանիմ։

Թագավոր ղդավրեշ կտփե, էնա դուռ։ Դավրեշ կէրթա։ Օր մը
տղեկներ օր վարժատնեն կիգան, թագավոր ուր տղի ձեռ կբռնա,
կնիկ լա ուր տղի ձեռ։ Բախչի մեջ կօլորդին։ Միամիտ դավրեշ
էնդից ձիով կիգա։ Թագավորի ձեռնեն ղտղեն կխլա, կթալա վըր
ձիուն, կէրթա։

Թագավոր ուր նիաթ կկախա։ Կնիկ կասա.—Թագավո՛ր, հընչ
էսօր տղա չունենք, հ'սօր տղե մը կա, հերիք ա մղիկ։

Թագավոր ու կնիկ կառնին ղտղեն կէրթան տուն։

Դավրեշ կառնի ղտղեն, կէրթա բանցր սարի մը գլուխ։ Դավրեշ
կասա տղին.—Տղա, ես հանդե հազարնոց գիրք կկարդամ։ Օր
կարդցի թըմա՝ սար կընգա, դուռ մը կրացվի, դու կմտնիս ըդ
դռնեն՝ կէրթաս մեջ, տրսվերկու հ'օդա ա։ Հ'օդեք հ'ըմեն օսկի ու
արծաթ լիքն ա։ Քու ձեռդ չի տաս, չվերուա, օր վերուս՝ սար կիգա
իրար, դու կմնաս մեջ, հ'օդեք հ'ըմեն կընցնես, կէրթաս։ Հ'օդես-
ներու վերջ ուրիշ հ'օդե մը կա, սնդուկ մը հանդե ըդ հ'օդի մեջ։
Սնդկի դուռ կրանաս, խութի մը կա հ'ինք, կվերուս, կդնիս քու ծոց։
Կթողիս կիգաս։

Դավրեշ գիրք կդրա ուր չոքերուն, կկարդա։ Օր կարդաց թը-
մամ՝ սար իրեք հազ զնգաց, դուռ մը բացվավ, տղեն գնաց սարի
մեջ, հ'օդեք հ'մեն հ'ընցավ, գնաց էն հ'օդի մեջ, օր խութին դրուկ
էր։ Վերուց զխութին, դրեց ուր ծոց։ Տղեն դարձավ էկավ, ըսեց.

«Դավրեշ կխաբա զիս, կանե, քիչ մը օսկի վերում, տանիմ իմ հետ»։ Տղեն օր ձեռ տվավ օսկիք, սար էկավ հ'իրար։ Դավրեշ ըսեց.

«Տղա, աստված քու տուն ավրա, դու հ'ո՞րի քու տուն ավրեցիր, օսկիք վերցուցիր օր սար էկավ հ'իրարդ»։

Դավրեշ թողեց, գնաց։ Տղեն օլորդավ հ'օդեսներու մեշ, գնաց օսկի հ'ազրուր մը գտավ։ Ուր ճկուք ու գլուխ զարկեց մըշ օսկեջրին, դարձավ օսկի։

Տղեն շատ օլորդավ, տեսավ օր ջրի մը ձեն կիգա։ Գնաց, գնաց, տեսավ օր գետ մը կէրթա, իշքեց գետի վերեն, տեսավ օր տախտակ մը էկավ շրի հետ, զինք թալեց վրը տախտակին ու շուր տարավ, տարավ քաղքի մը հ'առեշ հանեց։ Ըդ քաղքի տղեկներ էկած են փետ կժողվին, տեսան օր տղեն շրի հետ կիգա։

Ըն մեկ տղեն ըսեց.—Ես փետ չըմ ժողվի, էդա տղեն կհանիմ ջրեն։

Տղեն հանեց ջրեն, տարավ ուրանց տուն։ Ըդ տղի մամ ըսեց.—Տղա՛ լաո, հ'էսօր փետ հ'ո՞րի չբերիր։

Տղեն ըսեց.—Նանե՛, ըսօր ախպեր մը ջրեն հաներ իմ, փետ պետք չէ։

Լուսուն էլան ըդ էրկու տղեն հրդրաց գացին փետ ժողվեն։ Ըդ տղեն օր ջրեն էր հանած, ջոկվավ ուրընցնե, գնաց փլի մը տակ, խութին հանեց ուր ծոցեն, խութու վիդ օլրեց, խութու բերան լա բացեց, տրսվերկու հատ ախչիկ էլան խութուց, խաղցան, դհոլ զարկին, մուզուկա փչին, հրֆդրրան, էկան տղի ձեռ պագեցին, տրսվերկու օսկի դրին տղի շոքին ու մտան խութու մեջ։

Տղեն էլավ գնաց մեկել տղի մոտ։ Տեսավ օր ըն տղեն փետ շատ էր քոմե, ըսեց.—Տղա՛, փետ հե՞ր կքոմիս, ես փետի տեղ փարա կիտամ քղիկ, հաց առ։

Առան զիրար գացին տուն։

Տղեն ըմնօր օրեն տաս հեղ, քսան հեղ խութու բերան կբաներ, ախչիկներ կէլնեն կխաղեն, ամեն անգամ տրսվերկու օսկի կդրեն տղի շոքին ու կմտնեն խութու մեջ։

Տղեն շատ հարստացավ։ Ըդ տուն օր հ'ինք կմներ, հ'ինք շինեց քոշք ու սարա, շատ հարստցուց։ Օր մը գիշեր էլավ, թուղթ մը գրեց. «Տղա՛, դու զիս ազատեցիր ջրեն, ես լա ղքղիկ ազատեցի աղքատութենեն»։ Ու գիշերով կէլնի կէրթա։ Տղեն լուսուն կէլնի, կիշքա օր ըդ տղեն հ'ոդի չէ։ Տղի ջլեր կվերու, կիշքա օր թուղթ մը գրուկ դրուկ հ'ոդի։ Թղթի մեջ գրուկ ա. «Դու ազատեցիր զիս

ջրեն, ես լէ ազատեցի ղքղիկ աղքատութենեն»։ Ու գիշերով կէլնի կէրթա։ Տղեն լուսուն կէլնի կիշքա, օր ըդ տղեն հ՚ոդի չէ։

Կասա.—Նանե՛, գնաց թ՚էրթա, աստված ուր բան հաշողա։

Տղեն գիշերով կէրթա, շատ ու քիչ կէրթա, կտեսնա օր ճրագի մը լուս կէրևա։ Ճրագի լուսին խասա կէնա կէրթա։ Ճրագի լուսի հետ կէրթա շինութենի մը ռաստ կիգա։ Կէլնի շինութենի մեջ կիշքա օր թագավորի աղջիկն ա նստե, հաց կուտա։ Տղեն շատ անոթի կէղնի։ Կէրթա կնստի հացի վերեն, կուտա։ Թագավորի աղջիկ կասա.—Շո՛ւտ կի, էլի գնա։ Վոլա, թագավոր կռահեց, ղքղի կսպանա։

Տղեն խութին ծոցեն կհանա, խութու բերան օր կբանա, տրսվերկու աղջիկ խութուց կէլնին, կխաղան, քեֆ կէնին, կիգան տրսվերկու օսկի կդնին տղի չոքին, կմտնին խութու մեջ։

Թագավորի աղջիկ օր կտեսնա, կզարմանա։ Էլ չթողա ղտղեն էրթա։

Կասա.—Գնա քնի էնա հ՚օդեն, գիշերանց էլի գնա։ Իմ պապ չկռահա։

Տղեն կէրթա քնի հ՚օդեն։ Կես գիշեր օր կէղնի, աղջիկ կէրթա կիշքա, օր պուտ-պուտ քրտինք տվե տղի էրսին։

Կասա.—Խոզի՛, իմ պապ զիս իտեր քղիկ,—կգողնա զխութին ու կէրթա։

Տղեն գիշերանց կէլնի ու կէրթա։ Լուսումտին տղեն կիշքա օր ֆ.ութին ուր մոտ չէ։ Ըդ հ՚օդեն օր քնի հ՚ինք կկորցու, էլ չգինա էրթա։

Կէլնի ավդալ, կինի քաղքի մեջ։

Աղջիկ զխութին կտանի կիտա ուր պապուն, կասա.—Թագավո՛ր, գիշեր տղե մը էկավ իմ մոտ, էդա խութու բերան բա.ցեց, տրսվերկու աղջիկ էլան խութուց, օլորդան, քեֆ էնեցին, էկան տղի ձեռ պագին, տրսվերկու օսկի դրին տղի չոքին, մտան խութին։

Թագավոր զխութու բերան օր կբանա, տղի մանգանեն չզըվրոցու, ուրիշ մանգանե մը կզըվրոցու։ Կէլնին տրսվերկու արաբ, բալթեք ուրանց թևին, կզարկին, զըմեն կինի շելա։ Արաբներ օր կհաֆտրին, կիգան, կմտնին խութին։ Սհաթ մը կմնա, թագավոր կհեշըրնա, կասա.—Ախչի՛ լաո, աստված քու տուն ավրա, իմալ դու զմըր տուն ավրեցիր։

Թագավոր կկանչա դալալ, խութին կիտա դալալ, կասա.—Առ քաղքի մեջ օլորտի։ Ըսա էդա խութին վի՞րն ա։

Դալալ կառնի զխութին, կէրթա քաղքի մէջ, տղեն օր զխութին կտեսնա, դալալի ձեռնեն կառնի ու կփախնի։ Ասքարներ զտղեն կրոնին, կբերին թագավորի մոտ։

Թագավոր կասա.—Տղա՛, քու խութին ըդ ի՞նչ խութի էր։ Մենք օր բացինք ըդ խութու բերան, տրսվերկու արար էլան խութուց, զարկեցին զմեն էնեցին շելա, հրֆտրան, մտան մեջ խութուն։

Տղեն խելքով կէղնի, կասա.—Թագավո՛ր ապրած, իմ խութին իմ սեռն ա վրեն։ Ուրիշ մարդ օր բանա՝ աղչկներ կէղնին արար։ Թա չրս հավատա խութու բերան կբանամ աղչկներ թը խաղան։

Թագավոր կվախենա, կասա.—Կանի մենք էլենք դուս, փանջարից կիշկինք, դու զախչիկներ խաղցու։

Տղեն զխութու բերան կբանա, տրսվերկու ախչիկ կէլնին կխաղան, քեֆ կէնին, կիգան տրսվերկու օսկի կդնին տղի չոքին ու կմտնին խութու մեջ։

Թագավոր տզին չթողա մոտեն էրթա։ Տղեն կմնա թագավորի մոտ։ Հրմն օր զախչկներ կխաղցու, թագավոր չատ կհարստցու։

Թագավոր զուր ախչիկ կպսակե վրը ըդ տզին։ Տղեն օր մը թագավորին կասա.—Թագավո՛ր ապրած, իս իդգախ կէրթամ իմ պապու էրկիր։

Թագավոր կասա.—Դո՛ւ գինաս։

Տղեն կէլնի ուր հուր ու մուր կկապա, կբառնա ձիու վրեն, կէլնի կէրթա։

Օր մը մինչև հ'իրիկուն կքելա։ Գեզ ուրեն ռաստ չի գա։ Գերեզմընի մը ռաստ կիգա։ Կպառկին ըդ գերեզմընի մոտ։ Կտեսնան օր մարդմ՝ էնդեհից էկավ՝ փունջ մը կաղնի վարոց ուր ձեռ, էկավ փորեց մեռելմ՝ հանեց, տփեց, տփեց ըդ մեռել, վարոցներ թավ կոտրտեց։

Տղեն էլավ գնաց ըդ մարդու մոտ։

Ըսեց.—Բարեկամ, դու հ'ո՞րի զրդ տղեն կտփիս։

Մարդ ըսեց ըդոր.—Ըդի քանի սաղ էր, հիսուն օսկի հ'իսնե փոխով առավ, ինչ էնեցի, զիմ փարեն չտվեց ու հ'ինք մեռավ։ Ես լա քանի սաղ իմ, պտի հրմըն օր իգամ, հանիմ, տփիմ։

Տղեն ըսեց ըդ մարդուն.—Օր ես քու հ'իսուն օսկին տամ, էլ դու զրդ մեռել կհանի՞ս տփիս։

Մարդ ըսեց.—Օր տաս, ջնորհակալ կէղնիմ։

Հանեց հիսուն օսկու տեղ հարիր օսկի տվեց ըդ մարդուն, մարդ գնաց։

Տղեն քնավ ըդ տեղ, լուսուն էլան գացին։ Հալվորու մը ռաստ էկան։

Տղեն ըսեց.—Բաբա՛ շան,—ըսեց,—իմ պապու էրկիր չգինա՞ս որ ճամբով կէրթա։

Հալվոր ըսեց.—Լաո՛, ես քսան տարի քու պապու հ՚առեշ վոզիր իմ էղե։

Տղեն ըսեց.—Օր դու իմ պապու հ՚առեշ վոզիր ես էղե, դիս առ ու գնա իմ պապու մոտ։ Քանի օր դու սաղ իս քու կնիկ-ճիժ ես կպահեմ։

Հալվոր բալթեն դրեց թևին, ընկավ տղի հ՚առեշ ու գացին։

Հըմն օր հ՚իրկուն հալվոր զտղեն ու զկնիկ կքնցըցեր, ինք կկաներ պահապան։

Օր մը տղեն ըսեց հալվորին.—Բաբա՛ շան, հ՚ըսօր դու քնի, ես կկանիմ պահապան։

Հալվոր ինչ էնեց՝ չէլավ տղի վերեն։ Բալթէն տվեց տղեն, տղին ըսեց.—Դու կկանիս պահապան, գիշեր դավրեշ մը կիգա։ Դավրեշ օր էկավ, ես բոռալով չըմ հ՚իմնա, կացիմ իմ գլուխ կզարկիս, ես նոր կիմնամ։

Տղեն հընչի կես գիշեր կանավ պահապան։ Տեսավ օր դավրեշ մը էկավ։ Տղեն չխիմիշավ բալթով զարկեր հալիվորին։ Բոռաց, ինչ էնեց՝ չիմցավ։ Մինչև օր հալվոր հ՚իմցավ, դավրեշ առավ զախչիկ, գնաց։

Հալվոր ըսեց.—Տղա, աստված զքու աչ քոռցու, դու հ՚ո՞րի չթողիր հ՚ըսօր լա ես կանենք պահապան՝ հընչի տանենք զքու պապու տուն։

Հալվոր առավ զտղեն ու ինկավ դավրեշու հ՚ետև։ Գացին սարի մը գլուխ, դավրեշ գտան։ Իշկեցին օր դավրեշի դռան կուշտ մը ասլան ա կանուկ, կուշտ մը՝ խափլան։

Հալվոր բալթով հա՛ ընդոր զարկեց, հա՛ ընդոր, մտավ ներս։ Տեսավ օր ախչիկ նստուկ հ՚ոդի։

Ախչկան ըսեց.—Դավրեշ քա՞նի օր ա քնի։

Ախչիկ ըսեց.—Իրեք օր քնի, չորս օր էլ կա հ՚իմնա։

Ախչկան ըսեց.—Դավրեշ օր հ՚իմցավ, ասա քու հոգին ո՞ւր ա, տուր խազամ հետ, ես մենակ իմ, իմ սըրր չի գա։

Հալվոր գնաց, դարվեշ օր հ՚իմցավ, ախչիկ ուր նիաթ կախեց։

Դավրեշ ըսեց.—Ախչի՛, հ՚ո՞րի զքու նիաթ կախեր իս։

Ախչիկ ըսեց.—Ես մինակ իմ, քու հոգին տուր խազամ հետ։

Դավրեշ ըսեց.—Աստված զքու տուն ավրա, իմ հոգին հ՚ո՞ւր ա, իմ հանդ է խութու մեջ։ Խութին հանդ է ճնճղու փոր։ Ճնճուղ հանդ է, կարմիր եզան փոր, եզ հանդ է հավզի մեջ շաբաթ օրնէ շաբաթ օր կէլնի կօլորտի, կմտնի մեջ։

Ախչիկ ըսեց հալվորին։ Հալվոր առավ բալթեն, գնաց կանավ հավզի կուշտ։ Շաբաթ օր կեսօրին հալվոր տեսավ օր սև եզմ՚ էլավ՝ չխոսաց։ Սպիտակ եզմ՚ էլավ՝ չխոսաց, կարմիր եզ օր էլավ, բալթե մը զարկեց եզան ճակատ, եզան փոր պատռեց։ Խութին հանեց եզան փորեն։ Դավրեշ հիվընդցավ, խութու բերան բացեց, տեսավ օր թրթուռմ՚ հանդ է խութու մեջ, տարավ, դրեց դավրեշու հ՚առեջ, լանկե մը զարկեց խութուն, դավրեշ մեռավ։

Հալվոր դավրեշի հուր ու մուր, ձիանք առան ու գացին։ Օր գացին տղի պապու քաղքի մոտ, ջուհաբ տարան թագավորին, թե քու տղեն էկավ։

Տղեն հալվորուն ըսեց.—Ես քու հետ խավլ իմ էնի, գնա առ զքու կնիկ, ճիժ արի։ Ես կպահիմ քանի օր դու սաղ իս։

Հալվոր ըսեց.—Ես ըն մեռելն իմ, աստված զիս էնեց հալվորըմ էցկեց քու հ՚առեջ օր ճամբախ ցուցում քզի։

Հալվոր ըսեց.—Դու զիս ազատեցիր ըն մարդուց, ես լէ զքզիկ ազատեցի դավրեշից։

Ու հալվոր համբարձավ։